



Ռուսաստանի դաշնության  
ֆինանսական աջակցությամբ



**Այլընտրանքային և լրացուցիչ հաղորդակցման  
տարբեր մեթոդների կիրառման  
հնարավորությունները և կարիքը հաղորդակցման  
լուրջ դժվարություններ ունեցող անձանց հետ  
աշխատող մասնագետների շրջանում**

Այլընտրանքային հաղորդակցման միջոցների  
քարտեզագրման հաշվետվություն

**2023**

Փաստաթուղթը մշակվել է Կրթություն և հետազոտություններ հիմնադրամի կողմից, ՅՈՒՆԻՍԵՖ-ի հայաստանյան գրասենյակի հետ համագործակցությամբ:

Հետազոտությունն անցկացրեցին և փաստաթուղթը մշակեցին «Հայալեզու ալընտրանքային հաղորդակցման հավելվածի փորձարկում (AAC App» ծրագրի՝

### **Գլխավոր փորձագետ՝**

Կրթություն և հետազոտություններ հիմնադրամի տնօրեն, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Արմենուհի Ավագյանը

### **Փորձագետ՝**

ԵՊԲՀ վերականգնողական բժշկության ամբիոնի դոցենտ, կենսաբանական գիտությունների թեկնածու Տիգրան Պետրոսյանը

### **Մեջբերման համար -**

Ավագյան, Ա., Պետրոսյան, Տ., (2023) Ալընտրանքային և լրացուցիչ հաղորդակցման տարբեր մեթոդների կիրառման հնարավորությունները և կարիքը հաղորդակցման լուրջ դժվարություններ ունեցող անձանց հետ աշխատող մասնագետների շրջանում,- Ալընտրանքային հաղորդակցման միջոցների քարտեզագրման հաշվետվություն, 40 էջ

Սույն ձեռնարկը ստեղծվել է ՅՈՒՆԻՍԵՖ-ի հետ գործընկերությամբ:



Ներկայացված տեսակետները պատկանում են հեղինակներին և պարտադիր չէ, որ արտահայտեն ՅՈՒՆԻՍԵՖ-ի տեսակետները և քաղաքականությունը: ՅՈՒՆԻՍԵՖ-ն աշխատում է, որպեսզի Հայաստանում յուրաքանչյուր երեխա լինի սիրված, սնված և խնամված: Հիմնվելով ավելի քան 75 տարվա միջազգային փորձի և Հայաստանի երեխաների համար գրեթե 30 տարվա հաջողությունների վրա՝ ՅՈՒՆԻՍԵՖ-ը պարտավորություն է ստանձնում բարելավելու ամենախոցելի՝ աղքատության և մեկուսացման մեջ ապրող երեխաների կյանքը:

Նյութը վերահրատարակելու, կրկնօրինակելու, տպագրելու կամ թարգմանելու ցանկության դեպքում անհրաժեշտ է ձեռք բերել ՅՈՒՆԻՍԵՖ-ի և Կրթություն և հետազոտություններ հիմնադրամի գրավոր թույլտվությունը՝ հարցում ուղարկելով հետևյալ հասցեներին.

ՅՈՒՆԻՍԵՖ, Պետրոս Ադամյան փող. 14, Երևան 0010, Էլ. հասցե՝ [yerevan@unicef.org](mailto:yerevan@unicef.org)  
Կրթություն և հետազոտություններ հիմնադրամ, Նոր Նորքի երկրորդ զանգված, Թոթովենց 11, բն. 51, Երևան, Էլ. հասցե՝ [avagyan.aspu@gmail.com](mailto:avagyan.aspu@gmail.com)

© Միավորված ազգերի կազմակերպության մանկական հիմնադրամ (ՅՈՒՆԻՍԵՖ)

© Կրթություն և հետազոտություններ հիմնադրամ

## Բովանդակություն

ԱՄՓՈՓԱԳԻՐ	5
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	6
<b>1. ՀԵՏԱՉՈՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԿԻՐԱՌՎԱԾ ՄԵԹՈԴՆԵՐ</b>	8
1.1. Մասնակիցների նկարագիրը	
1.2. Հարցման աշխարհագրությունը	
1.3. Մասնակիցների ընտրության սկզբունքը	9
1.4. Մոդիֆիկացված հարցաթերթի կառուցվածքը	
<b>2. ՀԵՏԱՉՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ</b>	10
2.1. ԱՐ մեթոդների կիրառման և հասանելիության գնահատականը տարբեր միջավայրերում	10
2.2. Մասնագետների աշխատանքի առանձնահատկությունների և մասնագիտական գործունեության մեջ ԱՐ մեթոդների կիրառման կարիքների գնահատում	13
2.3. ԱՐ համակարգերի հետ աշխատելու համար անհրաժեշտ ռեսուրսները	
2.4. ԱՐ մեթոդների տեսակները և դրանք կիրառող մասնագետների թիվը	18
2.5. Հարցմանը մասնակցած մասնագետների բաշխվածությունը ըստ մարզերի	20
2.6. Հետազոտության մասնակից մասնագետների աշխատանքի ոլորտը	22
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ	26
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	24
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	
ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ	29
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	30
Հավելված 1. Աղյուսակների ու գծապատկերների ցանկ	27
Հավելված 2. Այլընտրանքային և լրացուցիչ հաղորդակցման (ԱԼՀ) կիրառման փորձի ինքնագնահատում	32
	33

## **Երախտիքի խոսք**

Հաշվետվության հեղինակները շնորհակալություն են հայտնում ՅՈՒՆԻՍԵՖի հայաստանյան գրասենյակին գործընկերության ու աջակցության համար, Երևանի ու մարզերի ՀՀ ԿԳՄՍ, Առողջապահության և Սոցիալական հարցերի նախարարությունների ենթակայությամբ գործող կազմակերպությունների ղեկավարներին՝ ցուցաբերած կազմակերպչական աջակցության համար և հարցման մասնակիցներին՝ հարցերին մանրակրկիտ ու պատասխանատվությամբ պատասխանելու համար:

## ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հաշմանդամություն ունեցող անձանց մեծամասնությունը սովորաբար ստանում է հաղորդակցման վերականգնման սահմանափակ ծառայություններ, եթե այդպիսիք կան: Ներկայացված հետազոտությունը գնահատել է 51 մասնագետների փորձը, ովքեր իրենց պրակտիկայում պարբերաբար օգտագործում են այլընտրանքային և հաղորդակցման մեթոդներ: Հետազոտության մասնակիցների խումբը ներառում էր 25 լոգոպեդ, 17 հատուկ մանկավարժ, 6 հոգեբան և 3 երգաթերապիստ: Մասնակիցների միջին տարիքը եղել է 34,3±6,4: Նրանք եղել են երևանից (19), Շիրակի մարզից (4), Արմավիրից (8), Տավուշից (10), Արարատից (2), Գեղարքունիքից (4), Կոտայքից (3) և 1 մասնակից՝ Սյունիքի մարզից: Մասնակիցների մեծ մասն ուներ 5-10 տարվա աշխատանքային փորձ: Ուսումնասիրության տվյալների վերլուծությունը ցույց է տվել, որ Հայաստանի տարբեր մարզերում հաղորդակցման բարդ խանգարումներ ունեցող անձանց հետ աշխատող 51 մասնագետների ԱԼՀ կիրառման փորձը համանման է: Ոչ տեխնոլոգիական ԱԼՀ միջամտությունների կիրառման ցուցանիշը մի քանի անգամ ավելի բարձր է, քան միջին և բարձր տեխնոլոգիական ԱԼՀ միջամտությունների կիրառման տոկոսը: Ամենահաճախ օգտագործվող մեթոդներն էին նկարային քարտերը և PECS-ը: Մասնակիցները նաև նշեցին, որ մասնագետների շրջանում ԱԼՀ հմտությունների հետագա զարգացման համար անհրաժեշտ են մասնագիտական վերապատրաստումներ, հայերեն լեզվով ծրագրային հավելվածներ, փորձի փոխանակում և հայերեն լեզվով ԱԼՀ միջամտության ուղեցույցներ: Հետազոտությունն իրականացվել է “Tennessee Talks Virtual AAC Institute”-ի կազմած հարցաշարի (Janice Reese, 2020) մոդիֆիկացված տարբերակով, որը համակցվել է լոգոպեդի հմտությունների գնահատման ստուգաթերթի հետ: Հետազոտության արդյունքներն ամփոփվում են հարցաշարի ընդհանուր միավորների վերլուծությամբ, ինչը ցույց տվեց գրեթե միանման միջին գնահատման միավորներ բոլոր շրջաններից մասնակցող մասնագետների համար, բացառությամբ Սյունիքի, Արարատի և Կոտայքի մարզերի, որտեղ մասնագետների թիվը շատ փոքր էր:

## ՆԵՐԱՃՈՒԹՅՈՒՆ

Ծանր հաշմանդամություն ունեցող անձինք հաճախ այլընտրանքային և լրացուցիչ հաղորդակցման (ԱԼՅ) մեթոդների կիրառման կարիք են ունենում (Light & McNaughton, 2015): Այս անձանց համար, ովքեր ունեն հաղորդակցման բարդ խանգարումներ, հաճախ ԱԼՅ մեթոդներ չեն կիրառվում՝ մասնագետների չիմացության կամ դրանց կիրառմանը առաջնահերթ կարևորություն չտալու պատճառով (Barrett & Marshall, 2013): Առկա տվյալները խոսում են տարբեր մարզերում հաղորդակցման վերականգնման և այդ թվում ԱԼՅ ծառայությունների սակավության մասին (Petrosyan et al 2019): Տարբեր հեղինակների կողմից կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ կան երեք հիմնական պատճառներ, որոնցով պայմանավորված է ԱԼՅ կիրառման ցածր մակարդակը: Պատճառներից առաջինը ներառում է տարբեր գործոններ՝ մեծ տոկոս կազմող գյուղական բնակչությունը; սահմանափակ առողջապահական, կրթական և տեխնոլոգիական ռեսուրսները և վատ աշխատող տնտեսությունը (World Bank, 2012): Նման սուղ ռեսուրսների պայմաններում բոլոր տեսակի վերականգնողական ծառայությունների պակաս է զգացվում (Wylie et al., 2013): Երկրորդ պատճառը կայանում է նրանում, որ հաղորդակցման վերականգնման ծառայությունները շատ բնակավայրերում հասանելի չեն, քանի որ դրանց առաջնահերթություն չի տրվում առողջապահության կառավարման կառույցների կողմից (Barrett & Marshall, 2013): Երրորդ պատճառը բազմալեզու բնակչությունն է, ինչը խոչընդոտ չի հանդիսանում Հայաստանի պայմաններում: Բացի այս երեք հիմնական գործոնները անհրաժեշտ է ավելացնել ևս մեկը՝ որոշ երկրներում ԱԼՅ որպես պոտենցիալ միջամտական մեթոդ կիրառելու հնարավորության վերաբերյալ իրազեկվածության պակասը (Bornman, Bryen, Kershaw, & Ledwaba, 2011; Mirenda, 2014): Մասնագետները, ընտանիքի անդամները և հաղորդակցման վերականգնման գործընթացին մասնակից այլ անձինք հաճախ իրազեկված չեն ԱԼՅ կիրառման միջոցով հաղորդակցման վերականգնման հնարավորության

վերաբերյալ, կամ հաղորդակցման բարդ խանգարումներ ունեցող անձանց պարագայում ԱՅ-ն որպես հաղորդակցման միջոց կիրառելու վերաբերյալ (Light & McNaughton, 2012):

Մինևույն ժամանակ ԱՅ (այլընտրանքային հաղորդակցում) մեթոդների համատարած կիրառման համար կան երկու հիմնական խոչընդոտ:

1. Ինչպես և ցանկացած նոր մեթոդ ներդնելիս, համայնքներում աշխատող մասնագետների կողմից տվյալ մեթոդի յուրացման մակարդակն է, ինչը կանխորոշվում է մի քանի գործոններով՝ մասնագետների նախկին փորձը, նրանց կրթական նախադրյալները, ինչպես նաև մասնագետների նոր մեթոդներ յուրացնելու մոտիվացիան, որը կօգնի նրանց լուծել իրենց առջև դրված նոր խնդիրները:
2. ԱՅ մեթոդները և հմտությունները պետք է փոխանցվեն մասնագետներին տեղական համայնքային կարիքներին և մշակութային առանձնահատկություններին համապատասխան ինչպես նաև լինեն կայուն:

Այս խնդիրների և խոչընդոտների ենթատեքստում, իդեալական կլիներ, որ ԱՅ մեթոդների ուսուցանումը իրականացվեր փորձառու մասնագետների կողմից:

Ներկայումս մենք միայն սահմանափակ պատկերացում ունենք հանրապետության տարածքում մասնագետների կողմից կիրառվող ԱՅ մեթոդների վերաբերյալ: Նույնականացնելով հիմնական ԱՅ մեթոդները, որոնք կիրառվում են մասնագետների կողմից, և մարտահրավերները, որոնք խոչընդոտում են մասնագետներին ԱՅ մեթոդների կիրառման գործընթացում, հնարավոր կլինի մշակել հետագա աջակցության ռազմավարություն և ծրագրեր՝ ԱՅ մեթոդները գործնականում առավել լայնորեն և համարժեք կիրառելու նպատակով:

**Ջետազոտության նպատակը և խնդիրները:** Ներկայացվող հաշվետվության հիմքում ընկած է հետազոտության տվյալների հավաքագրում, որի նպատակն էր գնահատել հաղորդակցման բարդ խանգարումներով անձանց հետ աշխատող մասնագետների ԱՅ մեթոդներ կիրառելու փորձը, ինչը անհրաժեշտ է հետագա աջակցության և ԱՅ մեթոդների կիրառումը առավել հասանելի դարձնելու



նպատակով ռազմավարության և համապատասխան ծրագրերի մշակման համար:

Չետագոտությունն իրականացվել է “Tennessee Talks Virtual AAC Institute”-ի կազմած հարցաշարի (Janice Reese, 2020) մոդիֆիկացված տարբերակով, որը համակցվել է լոգոպեդի հմտությունների գնահատման ստուգաթերթի հետ: Չետագոտության նպատակին հասնելու համար առաջնահերթ խնդիրներ էին մասնագետների փորձի և հմտությունների վերհանումը, կիրառվող ԱԼՅ մեթոդների դասակարգումը, ինչպես նաև մասնագետներին անհրաժեշտ ռեսուրսների և օժանդակության միջոցների վերլուծությունը:

## **1. ՉԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԿԻՐԱՌՎԱԾ ՄԵԹՈԴՆԵՐ**

### **1.1. Մասնակիցների նկարագիրը**

Չարցմանը մասնակցել է 51 մասնակից: Չարցմանը մասնակցած մասնագետները բոլորը կանայք էին: Նրանցից 25-ը լոգոպեդ էին, 17-ը հատուկ մանկավարժ, 6-հոգեբան և 3-ը երգոթերապիստ: Մասնակիցների միջին տարիքը կազմել է 34.3±6.4 (միջակայքը՝ 22 – 54 տարեկան):

### **1.2. Չարցման աշխարհագրությունը**

Չարցված մասնագետներից 19-ը աշխատում էին Երևանում, 4-ը՝ Շիրակի մարզում, 8-ը՝ Արմավիրի մարզում, 10-ը՝ Տավուշի մարզում, 2-ը՝ Արարատի մարզում, 4-ը՝ Գեղարքունիքի մարզում, 3-ը՝ Կոտայքի մարզում և 1-ը՝ Սյունիքի մարզում: Մասնակիցների մեծամասնությունը ուներ 5-10 տարվա աշխատանքային փորձ:

### **1.3. Մասնակիցների ընտրության սկզբունքը**

Մասնակիցների ընտրությունը չի իրականացվել պատահականության սկզբունքով, քանի որ մարզերում լոգոպեդական ծառայությունները համաչափ

չեն գարգացած: Այս գործոնով է պայմանավորված նաև տարբեր մարզերից հարցմանը մասնակցած մասնակիցների քանակական անհամասեռությունը:

**Չափվելու ժամանակի տվյալների հավաքագրման համար կիրառվել է մասնակից մասնագետների օնլայն հարցման մեթոդը:**

Հարցման համար կիրառվել է «Google Forms» հարթակը: Կիրառված հարցաթերթը (տե՛ս Չավելված 2) հանդիսանում է “Tennessee Talks Virtual AAC Institute”-ի կազմած հարցաշարի (Janice Reese, 2020) մոդիֆիկացված տարբերակը, որին ավելացվել է մասնագետների տվյալների հավաքագրման հարցաթերթի փոքր մասը՝ մասնագետների աշխատանքային փորձառության ոլորտը և տարիների քանակը գրանցելու նպատակով:

**1.4. Մոդիֆիկացված հարցաթերթի կառուցվածքը**

Մոդիֆիկացված հարցաթերթը պարունակում է 24 հարց Tennessee-ի հարցաշարից և 13 լրացուցիչ հարցեր մասնագիտական փորձառության վերաբերյալ (հավելված 1): Մոդիֆիկացված հարցաթերթի մեջ հաշվի են առնվել ներածական մասում քննարկված խոչընդոտող գործոնները և պայմանները:

Թարգմանությունից հետո հարցաթերթը վերանայվել է վեց փորձագետի/լոգոպեդի կողմից: Նրանք գնահատել են հարցաթերթում ներառված հարցերի և կետերի հստակությունը, ծավալի հնարավոր հակիրճ լինելը և տերմինաբանական ճշգրտությունը: Ոչ նշանակալի շտկումներ են կատարվել փորձագետների վերանայումից հետո: Այս փուլը օգնեց ապահովել հարցաթերթում ներառված կետերի համարժեքությունը և գնահատվող վերջնարդյունքների համապատասխանությունը թիրախային համատեքստերին: Հարցաթերթը կրկին թարգմանվել է հայերենից անգլերեն մասնագետ թարգմանչի կողմից և այնուհետև գնահատվել նույն վեց փորձագետի կողմից: Հակադարձ թարգմանությունից հետո հարցաթերթում տարբերություններ չեն հայտնաբերվել:

## **2. ՀԵՏԱՉՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ**

Հարցաթերթի առաջին 8 հարցերը վերաբերվում են հաղորդակցման կարիք ունեցող երեխաներին (այցելուներին), ում հետ աշխատել են հարցմանը մասնակից մասնագետները: Այս հարցերը փորձում են պարզել, թե ԱՅ մեթոդներից օգտվող երեխաներին ԱՅ կոնկրետ ինչպիսի տեսակներ են հասանելի տարբեր միջավայրերում և տարբեր ժամանակահատվածներում (Աղյուսակ 1):

### **2.1. ԱՅ մեթոդների կիրառման և հասանելիության գնահատականը տարբեր միջավայրերում**

Հարցաշարի այս հատվածը նպատակ ուներ պարզելու, թե որքանով են հաստատություններում կիրառվում ԱՅ միջոցները, և արդյոք դրանց կիրառումը չի սահմանափակվում մասնագետի աշխատասենյակի պատերի ներսում այն կիրառելով: Հայտնի է, որ ԱՅ միջոցները հաճախ դիտարկվում են որպես մոտեցումներ, որոնցով աշխատում է մասնագետը, ապա երեխան տեղափոխվում է այլ միջավայրեր՝ հաղորդակցվելով/կամ չհաղորդակցվելով իր նախկին, սոցիալապես անընդունելի կամ սոցիումի կողմից չընկալվող տարբերակներով: Արդյունքները գետեղված են աղյուսակ 1-ում:

### **Աղյուսակ 1. ԱՅ մեթոդների հասանելիության գնահատականը տարբեր միջավայրերում**


	Ո Ն	Ե Ր Ք Ե Մ Ն	Չ ա ճ ա խ	Մ ի շ տ
1. Հաղորդակցման արտահայտված դժվարություններ ունեցող այցելուներին մեր հաստատությունում հասանելի են այլընտրանքային հաղորդակցման (ԱՀ) ցածր տեխնոլոգիական միջոց/ներ:	3	25	19	6
2. Հաղորդակցման արտահայտված դժվարություններ ունեցող այցելուներին մեր հաստատությունում հասանելի են ԱՀ բարձր տեխնոլոգիական միջոց/ներ:	19	27	4	1
3. Հաղորդակցման արտահայտված դժվարություններ ունեցող մեր այցելուները մի միջավայրից մյուսին (սենյակից սենյակ, դասարանից դասարան և այլն) անցնելիս կամ մի մասնագետից մյուսի մոտ գնալիս կիրառում են արտահայտվելու ԱՀ միջոց/ներ:	14	21	15	1
4. Հաղորդակցման արտահայտված դժվարություններ ունեցող մեր այցելուները անհատական պարապմունքների, պլանավորված ու հստակ կառուցվածքով միջամտությունների ժամանակ կիրառում են ԱՀ միջոց/ներ	5	23	17	6
5. Հաղորդակցման արտահայտված դժվարություններ ունեցող մեր այցելուները խմբային պարապմունքների/դասերի ժամանակ կիրառում են ԱՀ միջոց/ներ:	10	23	15	3
6. Հաղորդակցման արտահայտված դժվարություններ ունեցող մեր այցելուները	16	20	13	2

հանգստի/դասամիջոցի/ազատ խաղի ժամանակ կիրառում են ԱՅ միջոց/ներ:				
7. Հաղորդակցման արտահայտված դժվարություններ ունեցող մեր այցելուները հասակակիցների հետ շփվելիս կիրառում են ԱՅ միջոց/ներ:	19	20	10	2
8. Հաղորդակցման արտահայտված դժվարություններ ունեցող այցելուները մեր հաստատությունից դուրս օգտագործում են արտահայտվելու ԱՅ միջոց/ներ:	19	28	4	0
9. Հաղորդակցման արտահայտված դժվարություններ ունեցող այցելուները իրենց կարիքները կարողանում են արտահայտել ԱՅ միջոցով:	4	30	12	5
10. Հաղորդակցման արտահայտված դժվարություններ ունեցող մեր այցելուները իրենց զգացմունքները կարողանում են արտահայտել ԱՅ միջոցով:	11	27	12	1
Ընդհանուր պատասխանների թիվը	120	24 4	12 1	27
«Դրական» և «Բացասական» պատասխաններ	364		149 <sup>1</sup>	

«Ոչ» և «Երբեմն» տարբերակները պայմանականորեն ընդունվել են որպես բացասական, իսկ «հաճախ» և «միշտ» տարբերակները՝ որպես դրական պատասխաններ: Աղյուսակից հստակ երևում է, որ «բացասական» պատասխանները («Ոչ» և «Երբեմն») գերակշռում են դրական պատասխանների համեմատությամբ: Եթե դրանց գումարային արժեքների համամասնությունները (364 և 149 համապատասխանաբար) վիճակագրական համեմատության ենթարկվեն, ապա պարզ է դառնում, որ նրանց միջև առակա է վիճակագրորեն

<sup>1</sup> Որպես պատասխան ներառված է նաև «0» միավորը: Հարցաթերթում պատասխանները ներկայացված են առանձին վանդակներով՝ Ոչ; Երբեմն; Հաճախ; Միշտ:#

հավաստի տարբերություն ( $P < 0.0001$ ): Սակայն սց և դրանց կիրառման մակարդակների միջև տարբերությունը վիճակագրորեն հավաստի է ( $P < 0.0001$ ): Այս տարբերությունը առավել պատկերավոր է ստորև ներկայացված գծապատկերում, որում ակնհայտորեն բարձր են «Երբեմն» և «Ոչ» պատասխանների գծապատկերները:



\*Գծապատկերներում ներկայացված են տարբեր միջավայրերում ԱՅ մեթոդների հասանելիությունը գնահատող 10 հարցերին տրված պատասխանների հաճախականությունը:

Հարցաթերթի հաջորդ 17 հարցերը վերաբերվում են Հաղորդակցման արտահայտված դժվարություններ ունեցող երեխաների հետ աշխատող մասնագետներին, նրանց աշխատանքի առանձնահատկություններին և մասնագիտական գործունեության մեջ ԱՅ մեթոդների կիրառման

մանրամասներին: Այս 17 հարցերից 4-ը չունեն թվային պատասխաններ, ինչպես որ պահանջվում է հարցաթերթում (հավելված 1), այլ պահանջում են թվարկել ԱՅ տարբեր տեսակի և բարդության մեթոդները, որոնցով աշխատում են իրենք մասնագետները:

**2.2. Մասնագետների աշխատանքի առանձնահատկությունների և մասնագիտական գործունեության մեջ ԱՅ մեթոդների կիրառման կարիքների գնահատում**

Հարցաշարի այս հատվածը նպատակ է ունեցել պարզելու, թե որքանով են մասնագետները տեղեկացված ԱԼՏ միջոցների վերաբերյալ և իրենց աշխատանքում որ տեսակներն են օգտագործում: Նաև պարզվել է առանցքային բառապաշար հասկացության վերաբերյալ պատկերացումը: Արդյունքները զետեղված են աղյուսակ 2-ում:

**Աղյուսակ 2. Մասնագետների աշխատանքի առանձնահատկությունների և մասնագիտական գործունեության մեջ ԱՅ մեթոդների կիրառման կարիքների գնահատում,**

	<b>Ո չ</b>	<b>Ե ր բ ե մ ն</b>	<b>Հ ա ճ ա խ</b>	<b>Մ ի շ տ</b>
1. Ես օգտագործում եմ ԱՅ ոչ տեխնոլոգիական միջոցներ (ժեստեր, սիմվոլներ, նկարներ և այլն):	0	9	25	17
2. Ես օգտագործում եմ ԱՅ միջին (մարտկոցով աշխատող) տեխնոլոգիական միջոցներ	43	7	1	0

(Bigmack, Step-by-Step, Cheap Talk այլ):				
3. Ես օգտագործում եմ ԱՅ բարձր տեխնոլոգիական միջոցներ (հավելվածներ, համակարգչային ծրագրեր):	29	16	5	1
4. Իմ այցելուն/երը ցածր տեխնոլոգիական ԱՅ միջոցները կիրառում են նաև առօրյա շփումների ժամանակ:	11	26	13	1
5. Իմ այցելուն/երը ԱՅ բարձր տեխնոլոգիական միջոցները կիրառում են նաև առօրյա շփումների ժամանակ:	14	25	11	1
6. Ես ծանոթ եմ հաղորդակցման արտահայտված դժվարություններ ունեցող երեխաների հետ աշխատանքում կիրառվող << առանցքային բառապաշարին >>:	6	22	19	4
7. Ես կարիք ունեմ վերապատրաստման, որպեսզի ծանոթանամ տարբեր տարիքի երեխաների «առանցքային բառապաշարին»:	2	11	13	25
8. Ես ծանոթ եմ առցանց ռեսուրսներին, որոնք կարող են օգտագործվել ԱՅ մոտեցումներ կիրառելիս:	12	23	14	2
9. Ես կարողանում եմ ԱՅ օգտատեր հանդիսացող երեխայի ընտանիքի հետ արդյունավետ աշխատել՝ ապահովելու ԱՅ միջոցի կիրառումը տանը:	25	15	10	1
10. Ես կարողանում եմ ԱՅ օգտատեր հանդիսացող երեխայի դպրոցի/մանկավարժների հետ արդյունավետ աշխատել՝ ապահովելու ԱՅ միջոցի կիրառումը դպրոցում:	15	22	14	0
11. Ես կարող եմ ադապտացնել ԱՅ միջոցները	6	20	19	5




այցելուների անհատական կարիքներին:				
12. . Ես կարիք ունեմ ԱՅ համակարգերի, սարքերի և հաղորդակցմանն օժանդակող միջոցների վերաբերյալ դասընթացի:	1	10	16	24
13. Ինձ ավելի շատ ռեսուրսներ են անհրաժեշտ ԱՅ-ից օգտվող երեխաների համար միջամտություն պլանավորելու և կազմակերպելու համար:	1	12	16	22
14. Ես դիմում եմ այլ գործընկերների օգնությանը, այցելուներին հետ ախտախնդիր ընթացքում ԱՅ միջոցներ կիրառելու հարցում:	10	28	12	1
Ընդհանուր պատասխանների թիվը	175	246	188	104
«Դրական» և «Բացասական» պատասխաններ	422		294 <sup>2</sup>	

Մասնագետների կարիքը գնահատող հարցերի պատասխանները կրկին ցույց տվեցին «բացասական» պատասխանների գերակշռություն «դրական» պատասխանների նկատմամբ, և կրկին համամասնությունների միջև տարբերությունը հավաստի էր: Բացասական արժեքների հավաստի գերակշռումը հաստատում է մասնագետների կողմից ԱՅ միջոցների կիրառման և դրանց համար անհրաժեշտ հմտությունների ոչ բարձր մակարդակը: Հարցաշարի այս դոմենում նկատվում են նաև դրական պատասխանների գերակշռում երեք առանձին հարցերի դեպքում, սակայն դրանք բոլորը (7,12,13) վերաբերվում են մասնագետների կարիքներին (ռեսուրսներ և վերապատրաստումներ), ինչը անուղղակի կերպով հաստատում է վերը նշված պնդումը:

<sup>2</sup> Որպես պատասխան ներառված է նաև «0» միավորը: Հարցաթերթում պատասխանները ներկայացված են առանձին վանդակներով՝ Ոչ; Երբեմն; Հաճախ; Միշտ:

**Գծապատկեր 2. Մասնագետների աշխատանքի առանձնահատկությունների և մասնագիտական գործունեության մեջ ԱՀ մեթոդների կիրառման կարիքների գնահատում**



\*Գծապատկերներում ներկայացված են մասնագետների աշխատանքի առանձնահատկությունները և մասնագիտական գործունեության մեջ ԱՀ մեթոդների կիրառման կարիքները գնահատող 14 հարցերից ստացված արդյունքները:

Մասնակիցների մոտ համեմատվել են նաև ԱՀ տարբեր մեթոդների կիրառման համամասնությունները: Ըստ ստացված տվյալների մասնակիցների 82.36% (42 մասնագետ) կիրառել է ցածր տեխնոլոգիական ԱՀ, 1.96% (1 մասնակից) կիրառել է միջին տեխնոլոգիական ԱՀ և 11.76% (6 մասնակից) կիրառել է բարձր տեխնոլոգիական մեթոդներ: Միջին տեխնոլոգիաների նկատմամբ բարձր տեխնոլոգիաների առավել հաճախ կիրառումը պայմանավորված է որոշ մասնագետների կոմից հայերեն լեզվով հավելվածի կիրառմամբ, իսկ ցածր տեխնոլոգիաների կիրառման անհամեմատ բարձր համամասնական տոկոսը պայմանավորված է վերջինների առավել մատչելիությամբ: Համամասնությունների վիճակագրական գնահատումը Chi-squared թեստի միջոցով ցույց է տալիս վիճակագրորեն հավաստի տարբերություն (P<0.0001) ցածր տեխնոլոգիաներ կիրառող համամասնության և մյուս երկու

համամասնությունների միջև: Մինչդեռ ցածր և միջին տեխնոլոգիաներ կիրառող խմբերի միջև տարբերության հզորությունը անհամեմատ թույլ էր՝  $P < 0.0514$ .

Մնացած 3 հարցերի նպատակն էր ցույց տալ առավել հաճախ կիրառվող տարբեր բարոյության ԱՅ մեթոդների տեսակները: Եվս մեկ հարց ներառվել է հարցաթերթում (տես աղյուսակ 3), որի օգնությամբ փորձել են վերհանել այն հնարավոր ռեսուրսները և միջոցները, որոնք իրենց՝ մասնագետների կարծիքով կնպաստեն ԱՅ մեթոդների տարածմանը, դրանց առավել նպատակային կիրառմանը և անհրաժեշտ հմտությունների ձևավորմանը:

### **2.3. ԱՅ համակարգերի հետ աշխատելու համար անհրաժեշտ ռեսուրսները**

Հարցաշարի այս հատվածը պարունակում է մասնագիտական ռեսուրսների հիմնական կարիքը, որը առանձնացնում են հարցման ենթարկվածները: Ընդհանուր առմամբ նշված կարիքները նման են, նաև նկատելի է, որ երբեմն մասնագետը դժվարանում է ձևակերպել իր կարիքը՝ սահմանափակվելով «Բոլոր այն ռեսուրսները ինչը կնպաստի աշխատանքները պլանավորելու և կազմակերպելու համար», «Համապատասխան սարքավորումների անհրաժեշտություն», «Բոլոր արդի միջոցները» արտահայտություններով: Նաև պարզ է դառնում, որ մասնագետները շփոթում են համակարգչային ծրագրերը հավելվածների հետ: Օրինակ՝ մի պատասխանում նշված են «Bigmack, Step-by-Step, Cheap Talk հավելվածներ»-ը որպես ռեսուրս, որի կարիքը առկա է, սակայն սրանք հավելվածներ չեն: Պատասխաններից մեկում «Մշտական կապ տվյալ երեխային շրջապատող մարդկանց հետ՝ ընտանիք, դասարան, ուսուցիչներ» նշվում է որպես ԱՅ-ից օգտվող երեխաների համար միջամտություն պլանավորելու և կազմակերպելու ռեսուրս:

### **Աղյուսակ 3. ԱՅ համակարգերի հետ աշխատելու համար անհրաժեշտ ռեսուրսները**

Թվարկեք, թե Ձեզ ի՞նչ ռեսուրսներ են անհրաժեշտ ԱՅ-ից օգտվող երեխաների համար միջամտություն պլանավորելու և կազմակերպելու համար:

- Լիովին ծանոթանալ միջին և բարձր տեխնոլոգիաներին:
- Մշտական կապ տվյալ երեխային շրջապատող մարդկանց հետ՝ ընտանիք, դասարան, ուսուցիչներ:
- Համապատասխան սարքավորումների առկայություն:
- Նոր մեթոդներ և աշխատանքային ճիշտ պլանավորում:
- Տարբեր տեխնոլոգիական միջոցներ, համակարգչային ծրագրեր:
- Չարգացնող խաղեր, հաղորդակցման տախտակներ, մարտկոցով աշխատող սարքեր, ձայնային ելքով հաղորդակցման օժանդակ միջոցներ:
- Ժամանակակից տեխնոլոգիաներ:
- Նոր մեթոդներ սովորել:
- Միջին և բարձր տեխնոլոգիաներ:
- Բոլոր արդի միջոցները:
- Թիրախային խմբի համար միջավայրի հարմարեցում և համապատասխան սարքավորումներ:
- Բոլոր այն ռեսուրսները ինչը կնպաստի աշխատանքները պլանավորելու և կազմակերպելու համար:
- Ուղեցույց կամ վերապատրաստում, որից հետո հնարավոր կլինի ԱՅ-ի գրագետ օգտագործումը:
- Հաղորդակցման հավելվածներով պլանշետներ:
- Bigmack, Step-by-Step, Cheap Talk հավելվածներ:
- Ժամանակակից համակարգչային ծրագրեր, խաղեր:
- Այլ մասնագետների աջակցություն
- Դիդակտիկ նյութեր

- Պրակտիկ հմտություններ ձեռք բերելու համար կազմակերպված վերապատրաստումներ
- Հաղորդակցման հավելվածներով պլանշետներ:
- Դասընթացներ ԱՅ-ի ցածր, միջին և բարձր տեխնոլոգիաներից օգտվելու մասին:
- Հայերեն հավելվածներ (տարբեր տարիքային խմբերի համար)

**2.4. ԱՅ մեթոդների տեսակները և դրանք կիրառող մասնագետների թիվը**

Հարցաթերթի այս հատվածը նպատակ ունի պարզելու, թե մասնագետները ԱՅ ի՞նչ մեթոդներ են կիրառում:

**Աղյուսակ 4. Հարցման ընթացքում նշված ԱՅ մեթոդների տեսակները և դրանք կիրառող մասնագետների թիվը**

ԱՅ ոչ տեխնոլոգիական միջոցներ	մաս նա գետ	ԱՅ միջին տեխնոլոգիական միջոցներ	մաս նա գետ	ԱՅ բարձր տեխնոլոգիական միջոցներ	մաս նա գետ
-Մատնացույց	1	-ԱՅ հավելված		Հավելվածներ	
-Աուդիո գրքեր	5	Նախատեսված		Արմավ ԱՅ	
-Նկարներ	31	Android ի համար	1	հավելված	4
-PODD	4	-Step by step	1	Expressia	3
-Հաղորդակցման տախտակներ	9	-Bigmack	1	Համակարգչային ինտերակտիվ առաջադրանքներ	1
-PECS	30	-Նկարազարդ գրքեր	1	Նորարարական լուծումներով խաղեր	1
-Ժեստեր	1	-Նկար-քարտեր	2		
-Հաղորդակցման հավելվածներ	2	-Ժեստեր, -Սիմվոլներ,	1 1		

-Պիկտոգրամաներ	4	-Թեմատիկ գրքեր	2	Aregak learning	
-Սիմվոլներ	12	-Յեռախոս	2	apps	1
-Դիդակտիկ պարագաներ	3	-Պլանշետ	1	Tobii,	3
-Սյուժետային նկարներ	1	-Otto mouse	1	Պլանշետներ	1
-Սիմվոլներով գրատախտակ	1	-Ձայնագրող սարքեր,	1	Համակարգչային ծրագրեր	1
-Վիզուալ դասացուցակ	1	-Հարմարեցված ստեղնաշարեր	1		
-խաղային համակարգիչ	4	-Մկնիկներ	1		
- Ինտերակտիվ հաղորդակցման սալիկներ	2	-Երաժշտական գրքեր	1		
-Լոտոներ	1	-Նկարազարդ գրքեր	1		
-Խրախոսանքի տախտակներ	1	-PECS	1		
	112		23		15

Աղյուսակ 4-ի ամփոփ տվյալները ցուց են տալիս 112 նշում ոչ տեխնոլոգիական միջոցների կիրառման վերաբերյալ և ընդամենը 23 և 15 նշում համապատասխանաբար միջին և բարձր տեխնոլոգիական ԱՐ մեթոդների կիրառման վերաբերյալ: Տարբերությունը ակնհայտ է և ցածր տեխնոլոգիաների կիրառումը գերազանցում է մյուս այլընտրանքներին: Առավել հաճախ կիրառվող մեթոդներ են նկարները և PECS-ը: Աղյուսակից նաև պարզ է դառնում, որ հարցման մասնակիցները ունեն դժվարություն տարանջատելու ցածր, միջին և բարձր տեխնոլոգիական միջոցները. ոմանք հավելվածները նշում են որպես ցածր տեխնոլոգիական միջոց: Կան դեպքեր, երբ մասնագետները որպես ԱՐ ցածր, միջին և բարձր տեխնոլոգիական միջոց նշում են աուդիոգրքերը, նկարազարդ,

երաժշտական գրքերը, ինտերակտիվ առաջադրանքները: Պատասխաններից ակնհայտ է նաև համակարգչային գրագիտության խնդիրը՝ գրագրերը շփոթվում են հավելվածների հետ, համակարգիչը, հեռախոսը, պլանշետը (ոչ թե համապատասխան ծրագրերը կամ հավելվածները) նշվում են որպես այլընտրանքային հաղորդակցման միջոց:

## **Մասնագետների պատասխանները ԱՅ կիրառման հարցաթերթին**

Բոլոր 51 մասնագետների պատասխանները ներառված են աղյուսակ 5-ում: Աղյուսակի վերջին սյունակը ցույց է տալիս ԱՅ հարցաթերթի անհատական միավորները: Այդ միավորները և տվյալները խմբավորված են նաև ըստ մարզերի: ԱՅ կիրառման հարցաթերթի միավորները գտնվում են 0-72 միջակայքում (24 հարցերից յուրաքանչյուրին կարող է տրվել առավելագույնը 3 միավոր): Բոլոր 51 մասնագետի պատասխանների միջին արժեքը և ստանդարտ շեղումը կազմել է  $28.4 \pm 8$ : Երևան քաղաքի համար պատասխանների միջին արժեքը և ստանդարտ շեղումը կազմել է  $31 \pm 7.8$ , Արմավիրի մարզում՝  $27.5 \pm 7.3$ , Գեղարքունիքում՝  $25.3 \pm 3.0$ , Տավուշի մարզում՝  $30.4 \pm 4.3$ , Շիրակի մարզում՝  $27.8 \pm 5.8$ , իսկ Կոտայքում՝  $18.7 \pm 4.7$ : Ակնհայտ է տարբեր մարզերից ստացված միավորների համասեռությունը, ինչը արտահայտվում է այդ միավորների միջին արժեքների համանմանությամբ: Բացառություն են կազմում Արարատի, Սյունիքի և Կոտայքի մարզերը, որտեղ հարցվածների թիվը շատ փոքր էր (1-3): Հարցաթերթի միավորների համանմանությունը ակնհայտ է նաև ներկայացված կետապատկերներում:

### **2.5. Հարցմանը մասնակցած մասնագետների բաշխվածությունը ըստ մարզերի և ըստ սեռի**

Աղյուսակից երևում է, որ հարցմանը մասնակցածների տարիքը տատանվում է 22-54 տարեկանի միջակայքում, բոլորը իգական սեռի են: Այցելուների տարիքը տատանվում է 18 ամսականից 19 տարեկանը:


**Աղյուսակ 5. Հարցմանը մասնակցած մասնագետների բաշխվածությունը ըստ մարզերի, մասնագիտության, սեռի և այցելուների տարիքի:**

	<b>Բնակչության մարզ</b>	<b>Սեռ</b>	<b>Մասնագետի տարիք</b>	<b>Այցելուների տարիք</b>	<b>ԱՅ կիրառման Հարցաթերթի միավոր</b>
1.	Արարատի մարզ	Իգական	25	0-5	17
2.	Արարատի մարզ	Իգական	27	2-6	25
3.	Արմավիրի մարզ	Իգական	35	6-18	17
4.	Արմավիրի մարզ	Իգական	47	7-8	16
5.	Արմավիրի մարզ	Իգական	40	6-19	28
6.	Արմավիրի մարզ	Իգական	45	11-14	33
7.	Արմավիրի մարզ	Իգական	42	6-18	34
8.	Արմավիրի մարզ	Իգական	42	3-18	21



9.	Արմավիրի մարզ	Իգական	37	3-18	31
10.	Արմավիրի մարզ	Իգական	34	6-14	40
11.	Գեղարքունիք	Իգական	31	2-18	30
12.	Գեղարքունիք	Իգական	46	3-12	22
13.	Գեղարքունիք	Իգական	37	3-6	28
14.	Գեղարքունիք	Իգական	54	5	21
15.	Երեւան	Իգական	47	14	11
16.	Երևան	Իգական	42	5-14	25
17.	Երևան	Իգական	27	3-14	30
18.	Երևան	Իգական	27	3-16	34
19.	Երևան	Իգական	25	6	33
20.	Երևան	Իգական	32	4	33
21.	Երևան	Իգական	30	2-16	42
22.	Երևան	Իգական	26	6-18	48
23.	Երևան	Իգական	41	10-15	25
24.	Երևան	Իգական	43	0-15	32
25.	Երևան	Իգական	35	2-8	33
26.	Երևան	Իգական	39	0-6	40
27.	Երևան	Իգական	27	0-5	35
28.	Երևան	Իգական	33	3-20	51
29.	Երևան	Իգական	44	0-5	29
30.	Երեւան	Իգական	33	3-14	31
31.	Երևան	Իգական	25	3-18	24
32.	Երևան	Իգական	32	2-15	17
33.	Երևան	Իգական	34	1.5-8	16
34.	Կոտայքի մարզ	Իգական	34	3-18	28

35.	Կոտայքի մարզ	Իգական	24	2-15	18
36.	Կոտայքի մարզ	Իգական	29	2-6	10
37.	Շիրակի մարզ	Իգական	26	2-9	26
38.	Շիրակի մարզ	Իգական	43	2-6	39
39.	Շիրակի մարզ	Իգական	40	2-6	15
40.	Շիրակի մարզ	Իգական	42	2-5	31
41.	Սյունիքի մարզ	Իգական	31	6-14	23
42.	Տավուշի մարզ	Իգական	33	3-5	37
43.	Տավուշի մարզ	Իգական	39	5-7	30
44.	Տավուշի մարզ	Իգական	42	3-18	21
45.	Տավուշի մարզ	Իգական	24	6-12	44
46.	Տավուշի մարզ	Իգական	22	4-18	25
47.	Տավուշի մարզ	Իգական	28	5-6	25
48.	Տավուշի մարզ	Իգական	38	3-18	30
49.	Տավուշի մարզ	Իգական	28	6-7	32
50.	Տավուշի մարզ	Իգական	22	6-17	28
51.	Տավուշի մարզ	Իգական	27	3-10	32




\*Չարցաթերթի 24 հարցերը ունեն չորս հնարավոր պատասխան՝ 0, 1, 2 և 3: Տեսականորեն բոլոր հարցերին պատասխանելով «Միշտ», որը գնահատվում է 3 միավոր, հնարավոր է հավաքել առավելագույնը՝ 72 միավոր:


### **2.6. Հետազոտության մասնակից մասնագետների աշխատանքի ոլորտը**

Հարցաշարի այս հատվածը հնարավորություն է տվել պարզելու, թե հարցման ենթարկված մասնագետները, որ ոլորտներում են աշխատում՝ կրթական, առողջապահական, թե՞ սոցիալական ապահովման:

Տվյալները ներկայացված են աղյուսակ 6-ում:

## Գծապատկեր 4. Մասնագետների միավորների բաշխումը 0-72 միջակայքում ըստ մարզերի





**Աղյուսակ 6. Հետազոտության մասնակից մասնագետների աշխատանքի ոլորտը**

Մասնագիտական ոլորտ	Մասնագետների թիվ
Ստացիոնար բժշկական ոլորտ	9
Ամբուլատոր բժշկական ոլորտ	5
Վերականգնողական ոլորտ	31
Դպրոցական համակարգ	22
Նախադպրոցական համակարգ	17
Տնային ուսուցման համակարգ	12
Հոգեբուժական կլինիկա	4
Հոգեբանական կենտրոն	10
Վաղ միջամտության ծառայություն	16
Այլ հաստատություն	20
Պատասխանների ընդհանուր թիվը	146 <sup>3</sup>

<sup>3</sup> Պատասխանների ընդհանուր թիվը մեծ է 51-ից, քանի որ մասնագետներից շատերը աշխատում են տարբեր ոլորտներում:

Թեև մասնագետներից ոմանք իրենց պրակտիկայում աշխատում են պատանեկան հասակի անձանց և մեծահասակների հետ, նրանցից բոլորը աշխատում են մանկական տարիքային խմբի հետ: ԱՅ մեթոդից օգտվող այցելուի առավելագույն տարիքը գրանցվել է 19 տարեկան:

## **ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

Ներկայացվող հետազոտության տվյալների վերլուծությունը ցույց տվեց, որ.

1. Հաղորդակցման լուրջ դժվարություններ ունեցող անձանց հետ աշխատող 51 մասնագետների ԱՅ կիրառելու փորձը համանման է Հայաստանի տարբեր մարզերում:
2. Մասնակիցների պրակտիկայում առավել հաճախ կիրառվում են ոչ տեխնոլոգիական ԱՅ մեթոդներ, և միայն փոքր թվով մասնակիցներ են նշել միջին և բարձր տեխնոլոգիական մեթոդներ կիրառելու փորձի մասին:
3. Առավել հաճախ կիրառվող մեթոդներն են եղել նկարները և PECS-ը:
4. Առկա է ԱՅ մեթոդների կիրառմանն ուղղված վերապատրաստումների, փորձի փոխանակման կարիք:
5. Առկա է հայերեն լեզվով ԱՅ մոտեցումների, ուղեցույցների կարիք:
6. Մասնագետների շրջանում կա շփոթություն մեթոդների, մոտեցումների, անգամ դրանց անվանումների վերաբերյալ: Օրինակ՝ երաժշտական գիրքը կամ նկարազարդ գիրքը նշվում են որպես ԱՅ միջին տեխնոլոգիական միջոցներ:

## **ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Սույն հետազոտությունը հնարավորություն ընձեռեց բացահայտելու երևանում և ՀՀ մարզերում աշխատող, աջակցող ծառայություններ մատուցող մասնագետների

պատկերացումները, գիտելիքները ԱԼՅ վերաբերյալ: Նաև վեր հանվեցին դժվարությունները, խնդիրները և բացերը:

Ըստ այդմ կառանձնացնեինք հետևյալ առաջարկությունները.

1. Կազմակերպել մասնագետների համակարգչային գրագիտությանն ուղղված դասընթացներ:
2. ԱԼՅ կիրառման հմտությունների ձևավորման նպատակով իրականացնել վերապատրաստման դասընթացներ, մասնավորապես՝ բարձր տեխնոլոգիական մեթոդների կիրառման վերաբերյալ:
3. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ անգամ վերապատրաստում անցած մասնագետներին, հետագայում դժվար է առանց փորձագետի օժանդակության պրակտիկայում ներդնել սովորած մոտեցումները, մեթոդները, անհրաժեշտ է ստեղծել սուպերվիզիաների մեխանիզմ, որի օգնությամբ դասընթացի ժամանակ ձեռք բերված գիտելիքը փորձագետի աջակցությամբ քայլ առ քայլ կներդրվի գործնական աշխատանքի մեջ:
4. Մասնագետներին տրամադրել անհրաժեշտ ռեսուրսներ՝ թաբլետներ, որոնք նրան ու օգտատերերի համար իրագործելի կդարձնեն ԱԼՅ միջոցների կիրառումը:
5. Աշխատել հաստատություններում աշխատող այլ մասնագետների ու տնօրենների հետ՝ նպաստելով ԱԼՅ կիրառմանը տարբեր միջավայրերում:
6. Ապագա մանկավարժների ու աջակցող մասնագետների բուհական ծրագրերում ներառել ԱԼՅ վերաբերող առարկա, թեմաներ, նրանց ի սկզբանե նոր մեթոդիկաների ու նորագույն տեխնոլոգիաների հետ ծանոթացնելու և այդպիսով այս գիտելիքի առավել արագ տարածման նպատակով:

### **ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ**

1. Barrett, H., & Marshall, J. (2013). Implementation of the World Report on Disability: Developing human resource capacity to meet the needs of people with communication disability in Uganda. *International Journal of Speech-Language Pathology*, 15, 48–52.

2. Bornman, J., Bryen, D., Kershaw, P., & Ledwaba, G. (2011). Reducing the risk of being a victim of crime in South Africa: You can tell and be heard! *Augmentative and Alternative Communication*, 27, 117–130.
3. Light, J., & McNaughton, D. (2012). The changing face of Augmentative and Alternative Communication: Past, present, and future challenges. *Augmentative and Alternative Communication*, 28, 197–204.
4. Light, J., & McNaughton, D. (2015). Designing AAC research and intervention to improve outcomes for individuals with complex communication needs. *Augmentative and Alternative Communication*, 31, 85–96.
5. Petrosyan T, Mkrtychyan H, Harutyunyan Z, Avagyan A. Preliminary Assessment of the Need and Awareness of Augmentative and Alternative Communication Systems in Armenia. *Iran J Public Health*. 2019 Jan;48(1):173-175.
6. World Bank. (2012). Country and lending groups. Available online at: <http://data.worldbank.org/about/country-and-lending-groups>.
7. Wylie, K., McAllister, L., Davidson, B., & Marshall, J. (2013). Changing practice: Implications of the World Report on Disability for responding to communication disability in under-served populations. *International Journal of Speech-Language Pathology*, 15, 1–13.

## **ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ**

ԱԼՐ – Այլընտրանքային լրացուցիչ հաղորդակցում

ԱՐ – Այլընտրանքային հաղորդակցում



AAC-Augmentative and Alternative Communication

PECS – Picture Exchange Communication System

### ՀԱՎԵԼՎԱԾ

#### Հավելված 1. ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐԻ ԵՎ ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՑԱՆԿ

Աղյուսակի համարը	Անվանումը	Էջը
Աղյուսակ 1	ԱՅ մեթոդների կիրառման և հասանելիության գնահատականը տարբեր միջավայրերում	10
Աղյուսակ 2	<b>Մասնագետների աշխատանքի առանձնահատկություններին և մասնագիտական գործունեության մեջ ԱՅ մեթոդների կիրառման կարիքների գնահատում</b>	14
Աղյուսակ 3	ԱՅ համակարգերի հետ աշխատելու համար անհրաժեշտ ռեսուրսները	18
Աղյուսակ 4	Հարցման ընթացքում նշված ԱՅ մեթոդների տեսակները և դրանք կիրառող մասնագետների թիվը	19
Աղյուսակ 5	Հարցմանը մասնակցած մասնագետների բաշխվածությունը ըստ մարզերի և ըստ սեռի	21
Աղյուսակ 6	Հետազոտության մասնակից մասնագետների աշխատանքի ոլորտը	25
Գծապատկեր 1	Տարբեր պատասխանների բաշխվածությունը	13
Գծապատկեր 2	Բոլոր 51 մասնագետների միավորների բաշխումը 0-72 միջակայքում	24

<b>Գծապատկեր</b> <b>3</b>	Երևանում աշխատող մասնագետների միավորների բաշխումը 0-72 միջակայքում	25
------------------------------	--	----

Հավելված **2**. Այլընտրանքային և լրացուցիչ հաղորդակցման (ԱՀ) կիրառման փորձի ինֆրագնահատում <sup>4</sup>

Ինֆրագնահատման այս հարցաթերթի օգնությամբ մենք փորձում ենք գնահատել ՀՀ մասնագետների կողմից այլընտրանքային հաղորդակցման ցածր, միջին և բարձր տեխնոլոգիական միջոցների կիրառումը տարբեր մարզերում, տարբեր ոլորտներում աշխատող, տարբեր սեռի, տարիքի, աշխատանքային փորձ ունեցող մասնագետների կողմից:

Ձեր կողմից տրամադրված տեղեկատվությունը կիրառվելու է տվյալների հավաքագրման, վերլուծության, այլընտրանքային հաղորդակցման միջոցների ֆարտեզագրման նպատակով, առանց անձնական տվյալների հրապարակման:

Համաձայն եմ	✓
-------------	---

Այս հարցերին պատասխանելիս հաշվի առե՛ք ձեր միջավայրում օգտագործվող այլընտրանքային հաղորդակցման (ԱՀ) բոլոր տեսակները, ներառյալ՝ հաղորդակցման/ցանկությունները արտահայտելու համար օգտագործվող նկարներ, PECS, հաղորդակցման տախտակներ, տեսողական/վիզուալ դասացուցակներ, մարտկոցով աշխատող սարքեր, ձայնային էլեկտրոնային հաղորդակցման օժանդակ միջոցներ, հաղորդակցման հավելվածներով պլանեթներ և այլն:

Գնահատե՛ք տվյալ հատվածը 0-3 բալային համակարգում՝ հաշվի առնելով, եետևյալ մեկնաբանությունը՝ **0** – ոչ, **1** –հազվադեպ **2**- հաճախ **3** -միշտ

<sup>4</sup> “Tennessee Talks Virtual AAC Institute”-ի կազմած հարցաթերթի (Janice Reese, 2020) մոդիֆիկացված տարբերակ՝ համակցված լոգոպեդի հմտությունների գնահատման ստուգաթերթի հետ

Մասնագիտություն.....

Մարզ/ քաղաք/ գյուղ.....

Ձեր սեռը.....

Ձեր տարիքը.....

Ձեր այցելուների միջին տարիքը.....

Հարցաթերթ				
	0	1	2	3
1. Հաղորդակցման արտահայտված դժվարություններ ունեցող այցելուներին մեր հաստատությունում հասանելի են այլընտրանքային հաղորդակցման (ԱՀ) ցածր տեխնոլոգիական միջոց/ներ:				
2. Հաղորդակցման արտահայտված դժվարություններ ունեցող այցելուներին մեր հաստատությունում հասանելի են ԱՀ բարձր տեխնոլոգիական միջոց/ներ:				
3. Հաղորդակցման արտահայտված դժվարություններ ունեցող մեր այցելուները մի միջավայրից մյուսին (սենյակից սենյակ, դասարանից դասարան և այլն) անցնելիս կամ մի մասնագետից մյուսի մոտ գնալիս կիրառում են արտահայտվելու ԱՀ միջոց/ներ:				
4. Հաղորդակցման արտահայտված դժվարություններ ունեցող մեր այցելուները անհատական պարապմունքների, պլանավորված ու հստակ կառուցվածքով միջամտությունների ժամանակ կիրառում են ԱՀ միջոց/ներ:				
5. Հաղորդակցման արտահայտված դժվարություններ ունեցող մեր այցելուները խմբային պարապմունքների/դասերի ժամանակ կիրառում են ԱՀ միջոց/ներ:				

<p>6. Հաղորդակցման արտահայտված դժվարություններ ունեցող մեր այցելուները հանգստի/դասամիջոցի/ազատ խաղի ժամանակ կիրառում են ԱՀ միջոց/ներ:</p>				
<p>7. Հաղորդակցման արտահայտված դժվարություններ ունեցող մեր այցելուները հասակակիցների հետ շփվելիս կիրառում են ԱՀ միջոց/ներ:</p>				
<p>8. Հաղորդակցման արտահայտված դժվարություններ ունեցող այցելուները մեր հաստատությունից դուրս օգտագործում են արտահայտվելու ԱՀ միջոց/ներ:</p>				
<p>9. Հաղորդակցման արտահայտված դժվարություններ ունեցող այցելուները իրենց կարիքները կարողանում են արտահայտել ԱՀ միջոցով:</p>				
<p>10. Հաղորդակցման արտահայտված դժվարություններ ունեցող այցելուները իրենց զգացմունքները կարողանում են արտահայտել ԱՀ միջոցով:</p>				
<p>11. Ես օգտագործում եմ ԱՀ ոչ տեխնոլոգիական միջոցներ (ժեստեր, սիմվոլներ, նկարներ և այլն):</p>				<p>Թվարկե՛ք՝</p>
<p>12. Ես օգտագործում եմ ԱՀ միջին (մարտկոցով աշխատող) տեխնոլոգիական միջոցներ (Bigmack, Step-by-Step, Cheap Talk այլ):</p>				<p>Թվարկե՛ք՝</p>

<p>13. Ես օգտագործում եմ ԱՀ բարձր տեխնոլոգիական միջոցներ (հավելվածներ, համակարգչային ծրագրեր):</p>				
<p>14. Իմ այցելուները/երը ցածր տեխնոլոգիական ԱՀ միջոցները կիրառում են նաև առօրյա շփումների ժամանակ:</p>				
<p>15. Իմ այցելուները/երը ԱՀ բարձր տեխնոլոգիական միջոցները կիրառում են նաև առօրյա շփումների ժամանակ:</p>				
<p>16. Ես ծանոթ եմ Հաղորդակցման արտահայտված դժվարություններ ունեցող երեխաների հետ աշխատանքում կիրառվող «առանցքային բառապաշարին»:</p>				
<p>17. Ես կարիք ունեմ վերապատրաստման, որպեսզի ծանոթանամ տարբեր տարիքի երեխաների «առանցքային բառապաշարին»:</p>				

<p>18. Ես ծանոթ եմ առցանց ռեսուրսներին, որոնք կարող են օգտագործվել ԱՀ մոտեցումներ կիրառելիս:</p>				
<p>19. Ես կարողանում եմ ԱՀ օգտատեր հանդիսացող երեխայի ընտանիքի հետ արդյունավետ աշխատել՝ ապահովելու ԱՀ միջոցի կիրառումը տանը:</p>				
<p>20. Ես կարողանում եմ ԱՀ օգտատեր հանդիսացող երեխայի դպրոցի/մանկավարժների հետ արդյունավետ աշխատել՝ ապահովելու ԱՀ միջոցի կիրառումը դպրոցում<sup>5</sup>:</p>				
<p>21. Ես կարող եմ ադապտացնել ԱՀ միջոցները այցելուների անհատական կարիքներին:</p>				
<p>22. Ես կարիք ունեմ ԱՀ համակարգերի, սարքերի և հաղորդակցմանն օժանդակող միջոցների վերաբերյալ դասընթացի:</p>				
<p>23. Ինձ ավելի շատ ռեսուրսներ են անհրաժեշտ ԱՀ-ից օգտվող երեխաների համար միջամտություն պլանավորելու և կազմակերպելու համար:</p>				

<sup>5</sup> Հարցին պատասխանեք, եթե ձեր այցելուն դպրոցահասակ է:

24. Ես դիմում եմ այլ գործընկերների օգնությանը, այցելուներին հետ ախտատանքի ընթացքում ԱՀ միջոցներ կիրառելու հարցում:				
--	--	--	--	--

Աժխտատանքային փորձառության ոլորտը և տարիների քանակը

	Մինչև 1 տարի	Մինչև 5 տարի	Մինչև 10 տարի	10 տարուց ավելի
Ստացիոնար բժշկական ոլորտ				
Ամբուլատոր բժշկական ոլորտ				
Վերականգնողական ոլորտ				
Մանկաբուժություն				
Դպրոցական համակարգ				
Նախադպրոցական համակարգ				
Տնային ուսուցման համակարգ				
Հոգեբուժական կլինիկա				
Հոգեբանական կենտրոն				
Վաղ միջամտության ծառայություն				
Այլ հաստատություն				
*Եթե նեեք եք այլ հաստատություն, ապա մանրամասնեք				